

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՅԵՐԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ռաֆիկ Պետրոսյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

ՀՀ վաստակավոր իրավաբան

Գարեգին Պետրոսյան

ՀՀ ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ,

ՀՀ պետական ծառայության 1-ին դասի խորհրդական,

իրավաբանական գիտությունների թեկնածու

Հոդվածում վերլուծված են իրավունքի և օրենսդրության բացերի հետազոտման ձևական-իրավաբանական և կոնկրետ սոցիոլոգիական մեթոդները պոզիտիվ իրավունքի հասկացության դիրքերից: Ուսումնասիրությունը կատարվել է հաշվի առնելով իրավունքի բացերի էության և դրանց դասակարգման «նեղ» ու «լայն» մոտեցումների գիտական հայեցակետերը և այն հանգամանքը, որ նշված մեթոդները իրավագիտության ընդհանուր մեթոդաբանության կատեգորիալ ապարատի օրգանական տարրեր են, որոնց բացահայտումը հետապնդում է իրավունքի պաշտպանությանը խոչընդոտող բացերը լրացնելու և/կամ հաղթահարելու, օրինականություն ապահովելու նպատակ:

Հիմնաբառեր. իրավունքի բացեր, բացերի բացահայտում, մեթոդաբանություն, ձևական-իրավաբանական, կոնկրետ սոցիոլոգիական, բացերի բացահայտման եղանակներ, անալոգիա, փորձարարություն

Հունարեն *methodos* եզրույթը հայերեն թարգմանությամբ նշանակում է հետազոտման ուղի, եղանակ, տեսություն, ուսմունք, մարդու տեսական և պրակտիկ գործունեությունը կարգավորող ճանաչողական սկզբունքների, միջոցների, մոտեցումների, հնարքների ամբողջություն, որոնք տարբերվում են ըստ կիրառության բնագավառների: Դրան համապատասխան էլ «Մեթոդաբանություն» փիլիսոփայական ուսմունքը պայամանվորում է իմացու-

թյան գործընթացի ընդհանուր ուղղվածությունն ու աշխարհի գիտական պատկերի գծերը, ընդգրկում է գիտելիքի կառուցվածքի վերլուծությունը, դրա ձևակերպման փուլերի և եղանակների ուսումնասիրությունը, դրանց հիմնավորումը և ձանաչողական-ստեղծագործական (էվրիստիկական) արժեքի վերհանումը¹:

Իրավագիտության մեթոդաբանությունը (իրավաբանական մեթոդների ամբողջությունը) իրականության առանձնահատուկ իրավաբանական հետազոտություն (իմացություն) է, որի միջոցով և որի հետևանքով ձեռք է բերվում, բազմապատկվում, խորանում ու զարգանում է իրավաբանական գիտելիքը: Այլ կերպ՝ իրավագիտության մեթոդաբանությունը իրավաբանական իրականությունն է, ձանաչվող իրականության իրավական հատկությունների և կապերի համակարգը, որի իրավաբանական բնույթը պայմանավորված է նրանով, որ իրականության համապատասխան յուրացումը, հասկացությունը և մեկնաբանությունն իրականացվում են իրավունքի հասկացության դիրքերից, տեսանկյունից ու սահմաններում, որոնք ընկած են տվյալ իրավաբանական մեթոդի հիմքում և ելակետային ձևով որոշում են այդ մեթոդի իրավաբանական-իմացաբանական կողմորոշվածությունն ու ուղղվածությունը (ինտենցիոնալությունը):

Ըստ ակադեմիկոս Վ.Ներսեսյանցի՝ իրականության իրավաբանական իմացության առանձնահատուկ մեթոդը կատարում է հետևյալ երկու հիմնական գործառույթները՝ 1) իրավաբանական գիտելիքների ձեռքբերում, 2) տեսական (գիտական) համակարգի կառուցում: Ըստ որում՝ իրավաբանական հետազոտման մեթոդի օգնությամբ ձեռք բերված գիտելիքներն էլ հենց դառնում են իրավաբանական տեսության կառուցման և հիմնավորման եղանակ²:

Ելնելով իրավունքի բացերի էությունից և դրանց դասակարգման «նեղ» ու «լայն» մոտեցումներից՝ Վ.Լիխաչովն իրավացիորեն իրավունքի բացերի բացահայտման մեթոդները բնութագրում է որպես իրավագիտության մեթոդաբանության կատեգորիալ ապարատի օրգանական տարրեր³: Ըստ որում, իրավագիտության պատմության և տեսության մեջ իրավունքի բացերի հասկացության և հատկանիշների հիմնախնդիրը պարբերաբար զուգորդվել է նախ՝ իրավունքի բացերի բացահայտման, իսկ ապա՝ դրանք լրացնելու կամ հաղթահարելու մեթոդների մշակման անհրաժեշտության ընդգծումով: Այսպես՝ Վ.Լիխաչովը գտնում է, որ իրավունքի բացերի ծագումը սերտորեն առնչվում է դրանց դասակարգման խնդրի հետ⁴, իսկ ըստ Վ.Զաբիգալյոյի՝ բացերի դասակարգումը, անկասկած, «այդ երևույթի բնույթի, բացերի ծագման պատճառների և դրանք հաղթահարելու կարևոր

1 Տե՛ս ՀՍՀ, Երևան 1981, հատ.7, էջ 38-ի «Մեթոդ» և «մեթոդաբանություն» եզրույթները:

2 Տե՛ս Վ.Ս.Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն: Եր., «Նաիրի», 2001, էջեր 22-24:

3 Տե՛ս Лихачев В.И. Установление пробелов в современном международном праве. Казань..Изд-во Казан. ун-та, 1989, էջ 7:

4 Տե՛ս В.И.Лихачев Проблемы в современном международном праве. Издательство Казанского университета, 1985, էջ 31:

և անհրաժեշտ աստիճան են»: Այս հեղինակի կարծիքով՝ բացերի դասակարգումը չափազանց կարևոր է դրանց բացահայտման, լրացման և հաղթահարման համար, որովհետև այդ գործընթացն առավել քան կոնկրետ է և կապվում է այնպիսի օբյեկտների հետ, որոնք պահանջում են անհատական գնահատում և պարզաբանում: Այդ գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է բացերը պարզելու միջոցների ճիշտ ընտրությունից, որը ենթադրվում է, այսպես կոչված, «բացային» իրադրությունից, դրա բաղադրատարրերից, դրա հետևանքներից: Բացերի ճշգրիտ դասակարգման, դրանք այս կամ այն տեսակին վերագրելու ժամանակ պարզվում են շատ և շատ հարցեր⁵:

Իրավակիրառման գործընթացում, բացերի բացահայտման և դրանց լրացման կամ հաղթահարման հասկացությունները համեմատելով միմիանց հետ, Վ.Լազարեն առաջնությունը տալիս է բացերի բացահայտմանը, քանի որ ըստ նրա՝ այդ հարցի լուծումը կարևոր նշանակություն ունի օրինականության պահպանման և իրավական կարգավորման համակարգի կատարելագործման համար⁶:

Իրավաբան գիտնականները, իրավունքի բացերի առկայության կամ բացակայության վերաբերյալ ունեցած իրենց պատկերացումներին համապատասխան, տարամիտում են նաև այդ բացերի բացահայտման մեթոդների և եղանակների որոշարկման, հետևաբար և այդ բացերը վերացնելու կառուցակարգերի օգտագործման հարցերում: Այսպես՝ իրավական բացերի առկայությունը սոսկ միայն ընդհանուր նորմերում ամրագրված և կոնկրետ նորմով չկարգավորված իրավահարաբերությունների մեջ դիտարկող հեղինակների, այսինքն՝ բացերի բնորոշման նկատմամբ «նեղ» սնուցման կողմնակից հեղինակների կարծիքով դրանք (բացերը) պետք է փնտրել միայն արդեն գոյություն ունեցող, օրենսդրորեն ձևակերպված իրավական ակտում և այն էլ այն դեպքում, երբ «կոնկրետ դեպքի փաստական հանգամանքները թեկուզև ուղղակիորեն չեն նախատեսված, բայց անհրաժեշտաբար բխում են օրենքի հիմնական դրույթներից»⁷, կամ էլ երբ բացի հաստատման հիմքում ընկած է օրենսդրի մտադրության մասին ենթադրությունը⁸: Մեկ այլ հեղինակի մեկնաբանությամբ իրավաբանական բացն առկա է այնտեղ, որտեղ իրավական կարգավորման ենթակա հարաբերություններն իրենց ծավալով գերազանցում են կոնկրետ նորմերով փաստորեն կարգավորվող հարաբերությունների համակցությանը⁹:

Իրավունքի բացերի առկայությունը միայն արդեն իսկ գոյություն ունեցող, օրենսդրորեն ձևակերպված իրավական ակտերում դիտարկող հեղի-

5 Տե՛ս Забига́йло В.К. Проблемы пробелов в праве. Киев, 1974, էջ 50:

6 Տե՛ս В.В.Лазарев Проблемы в праве и пути их устранения.М., Юридлит., 1974, էջ 40:

7 Տե՛ս, օրինակ՝ Акимов В.И. Понятие пробела в прова, Иоффе О.С., Шаргородский М.Д.Вопросы теории и прова.-М., Юридическая литература. 1961, Елькин П.С. К вопросу об аналогии закона в уголовном судопроизводстве//Актуальные проблемы укрепления социалстической законности и правопорядка. 1982, էջ 84:

8 Տե՛սБелкин А.А. Аналогия в государственном праве// Правоведение 1992, N 6:

9 Տե՛սАбушенко Д.Б. Судебное усмотрение в гражданском и арбитражном процессе. М.,НОРМА, 2002, էջ 110:

նակները, իհարկե, ոչ առանց հիմքի գտնում են, որ օրենսդրության բացերը կարող են բացահայտվել ոչ այլ կերպ, քան կենսական իրադրությունների իրավաբանական կարգավորման գործընթացում, որովհետև հենց այդտեղ է, որ իրավակիրառողը մանրակրկիտ կերպով ուշադրություն է դարձնում այս կամ այն իրադարձության վրա, տվյալ դեպքով մեկնաբանում և կիրառում է օրենքը, լուծում է իրավունքի հարցերը, հասնում է պարտականությունների կատարմանը կամ արգելանքների պահպանմանը: Այդպիսի գործունեության ընթացքում ցանկացած յուրիստիկցիոն մարմին կարող է պարզել, որ գործի լուծման համար անհրաժեշտ նորմերը լրիվ կամ մասնակիորեն բացակայում են, և անհրաժեշտություն կա հաղթահարել բացը¹⁰:

Մի շարք գիտնականների կարծիքով՝ իրավունքի բացը պարզելիս դրա հետագա հաղթահարման եղանակ ընտրելու համար առավել կարևոր նշանակություն ունի այն (բացը) սահմանազատել ընդարձակ մեկնաբանման դեպքից: Այս դեպքում հատուկ ուշադրություն է դարձվում օրենսդրի կողմից նախատեսված, բայց իրավական նորմում չարտացոլված փաստը օրենսդրի տեսադաշտից դուրս թողնված փաստերից առանձնացնելուն¹¹: Սա անվիճելիորեն նշանակում է, որ իրավակիրառ մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է մեկնաբանի օրենքը կամ էլ կարողանա գործող նորմերի և վիճելի դեպքի «բավականաչափ աշխատատար համեմատական վերլուծություն» կատարել:

Ըստ իրավական բացերի նկատմամբ «լայն» մոտեցման կողմնակից Վ.Ջաբիգայլոյի՝ բացի մասին կարող է խոսք գնալ միայն այն դեպքում, երբ իրավունքում բացակայում է կոնկրետ պատվիրանը, բայց գործող օրենսդրության բովանդակությունից ակնհայտորեն երևում է, որ օրենսդիրը պետք է կարգավորեր որոշակի հասարակական հարաբերությունը, և ինչ-ինչ պատճառներով չի կարգավորել այն¹² ասվածից փաստորեն բխում է, որ իրավական բացերի մասին խոսվում է «գործող օրենսդրության» ձևավորման պահին գոյություն չունեցող հարաբերությունների կապակցությամբ, որոնք հայտնի էլ չէ, թե երբ կառաջանան: Նման տեսակետը մեր կարծիքով ընդունելի չէ, որովհետև նախ՝ իրավական կարգավորման բացերը կարող են գոյություն ունենալ և դրսևորվել միմիայն արդեն իսկ կարգավորված հարաբերություններում, և երկրորդ՝ բացերի բացահայտման խնդիրը սոսկ իրավական նորմի բացակայության հետ կապելը, այսինքն՝ այն միայն օրենքում փնտրելը կարող է վերածվել բացերի հիմնավորող սոսկ օրենսդրության տեխնիկական թերությունների վերացման գործընթացի հանգեցնելու:

Իրավունքի բացերը բացահայտելու և դրանք լրացնելու կամ հաղթա-

10 Տե՛ս Спектор Екатерина Ильинична Пробелы в законодательстве и пути их преодоления. Дисс... канд. юрид.наук, М., 2003, էջ 50:

11 Տե՛ս Шершеневич П.Г. Общая теория права.-СПб, 1903, էջ 320, Комиссаров К.И. Задачи судебного надзора в свете гражданского судопроизводства.-Свердловск, 1971 էջ 34, Абушенко Д.Б., նշվ.աշխ.էջ 110:

12 Տե՛ս Забигайло В.К. Проблема «пробелов в праве» (К критике буржуазной теории)- Киев.. Науковадумка, 1974, էջ 37:

հարելու գործընթացն իրավակիրառողի պրոֆեսիոնալ մտավոր գործունեության երկու, անխզելիորեն միմյանց հետ կապված փուլեր են, որոնցից առաջինն ընդգրկում է բացերի հետազոտման եղանակները, իրավակիրառողի վերլուծական աշխատանքը, նրա մտավոր տրամաբանական գործունեությունը: Իրավական բացը պարզելուց հետո իրավակիրառող մարմինը չի կարող այդ հիմքով որևէ մեկին մերժել նրա իրավունքների պաշտպանության հարցում. Նա պարտավոր է բացը պարզելուց հետո անցում կատարել դեպի հաջորդ փուլ՝ բացի հաղթահարմանը: Մտածողական գործընթացի այդ երկու փուլերն էլ հիմնվում են միևնույն տրամաբանական գործառնությունների վրա, իսկ վերջիններս իրենց հերթին կապված են մեկնաբանման այս կամ այն եղանակի հետ:

Իրավակիրառողի մտավոր տրամաբանական գործունեությունը, ինչպես ներկայացվում է իրավաբանական գրականության մեջ, իրականացվում է իրավունքի բացերի բացահայտման երկու հիմնական՝ ա) ձևական-իրավաբանական բ) կոնկրետ սոցիոլոգիական, մեթոդներով: Այդ մեթոդների և դրանց բաղկացուցիչները կազմող, այն է՝ նոր իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող ապացույցների շրջանակը որոշելուն, համապատասխան նորմերի առկայությամբ բացերի լրացման անթույլատրելիությանը, բացերի բացահայտմանը և իրավաստեղծ գործունեության փոխհարաբերակցությանը, գործող օրենսդրության կիրառման պրակտիկայի ուսումնասիրմանը և ամփոփմանը, օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության հիմնավորմանը, նորմատիվ իրավական ակտերի մշակմանը, օրենսդրության համակարգմանը վերաբերող ընդհանուր հարցերը դեռևս 20-րդ դարի 80-ականներին գիտականորեն մշակվել են Վ.Լազարևի կողմից¹³:

Ֆորմալ-իրավաբանական մեթոդի տակ հասկացվում է իրավունքի գործող համակարգի բովանդակության մշակման և վերլուծության եղանակների հատուկ համակցությունը, որն ուղղված է հենց նորմատիվ ակտերի «տեխնիկական» թերությունների և վրիպակների բացահայտմանը: Բացերի առկայությունը պարզելու այդ մեթոդի յուրահատկությունը կայանում է իրավունքի, իրավական համակարգի՝ նյութական և սոցիալական պայմանավորվածության որոշ էական, այն է՝ իրավունքի կառուցվածքային իրավաչափություններն արտահայտող կողմերից հրաժարվելու, այդ մեթոդի կիրառման շրջանակներում զուտ տրամաբանական, լեզվական և այլ վերացական կողմերը առաջին պլան մղելու մեջ:

Իրավական նորմը վարքագծի վերացական կանոն է, և այն այս կամ այն դեպքում կիրառելու համար պահանջվում է մեկնաբանման միջոցով կոնկրետացնել այդ նորմը: Իրավական նորմի մեկնաբանման եղանակներ (հնարքներ) են քերականական, տրամաբանական, համակարգային, պատմական (միասնաբար օգտագործվող պատմական-քաղաքական), իրավա-

13 Տես, օրինակ, Лазарев В.В. О видах пробелов в праве...//Правоведение, 1969, N 6 էջեր 30-35, նույնը Проблемы в праве и пути..., էջեր 57-129 և այլն:

բանական-եզրույթային (հատուկ-իրավաբանական) և նպատակային մեկնությունները¹⁴:

Իրավունքի նորմի մեկնաբանումը կոնկրետ պայմաններում դրա գործողության իրական բովանդակության պարզաբանումը և բացահայտումն է: Ըստ որում, պարզաբանում ասելով նկատի է առնվում մեկնաբանվող նորմի որոնվող բովանդակության բացահայտման, իմաստավորման և հիմնավորման բուն իրավական-ճանաչողական ընթացակարգը, իսկ բացատրում ասելով նկատի է առնվում մեկնաբանվող իրավական նորմի բովանդակության համապատասխան (պաշտոնական կամ ոչ պաշտոնական) պարզաբանման արդյունքները ընդհանուր օգտագործման համար հրապարակայնորեն արտահայտելու գանազան հատուկ ձևերը¹⁵:

Իրավունքի նորմի մեկնաբանման եղանակների կիրառման միջոցով իրավակիրառը լիակատար պատկերացում է կազմում իրավունքի գործող նորմերի մասին և դրանով իսկ, բացասական եզրահանգման տեսքով թույլ է տալիս որոշել իրավունքում բացի առկայության կամ բացակայության հարցը: Իրավական նորմի իրավաբանական-ձևական մեկնաբանումը կարևորվում է նրանով, որ իրավական տեքստը շարադրված է հենց այն լեզվով, որով իրականացվում է նաև իրավիճակի նորմատիվ-իրավական կարգավորումը, և այդ մեկնաբանումը սկսվում է հենց նորմի կամ դրա մասին սովորական տեքստուալ վերլուծությունից, որն ուղղված է տվյալ նորմի կազմաբանական և շարահյուսական կառուցվածքի պարզաբանմանը: Տրամաբանական մեկնաբանումն իրավական ակտի կամ դրա մասի, մեկնաբանվող նորմի տրամաբանական փոխկապակցված կառուցվածքային բաղադրատարրերի իրավաբանական-տրամաբանական բացատրության գործընթացում ձևական տրամաբանության օրենքների և կանոնների օգտագործման եղանակներն ու ձևերն են, որոնց միջոցով իրավակիրառը պարզում է իրավական նորմի՝ օրենսդրի կողմից նկատի ունեցած, բայց բառացի ձևակերպման մեջ ուղղակիորեն չարտահայտված մտքի բովանդակությունը: Այս եղանակով է պարզվում նաև կարգավորման ենթակա իրավիճակի իրավաբանական-տրամաբանական իմաստավորման, վերացական նորմի և քննարկվող կոնկրետ դեպքի միջև կապի առկայությունը: Համակարգային մեկնաբանության միջոցով իրավակիրառ մարմինը պարզում է նորմատիվ ակտի մեջ այս կամ այն ինստիտուտի, իրավունքի այս կամ այն ճյուղի կամ իրավունքի ամբողջ համակարգում տվյալ նորմի տեղը և դերը:

Պատմական-քաղաքական մեկնաբանումը նպատակ ունի բացահայտել մեկնաբանվող նորմի կոնկրետ պատմական պայմանավորվածությունը, դրա բովանդակության վրա ազդող սոցիալական, քաղաքական և այլ գործոնները, նորմն ընդունող և/կամ նորմի իրականացման ժամանակ օրենս-

14 Իրավական նորմերի մեկնաբանման մյուս եղանակները (աղբյուրագիտական, գործառնական, վարդապետական (դոկտրինալ), նպատակային և այլն) իրավունքի բացերի բացահայտման հարցում մեծ դեր չեն խաղում:

15 Տե՛ս Վ.Ս. Ներսեսյանց, նշվ.աշխ.էջ 254:

դրի կամքը, այլ կերպ ասած, նորմի տնտեսական և քաղաքական բովանդակությունը, դրա ընդունման և հրատարակման նպատակն ու պատճառները¹⁶:

Իրավունքի բացերի բացահայտման նպատակով օգտագործվող մեկնաբանման տարբեր եղանակները, անշուշտ, սերտորեն կապված են այդ նորմերի տրամաբանական զարգացման հետ: Այլ կերպ ասած՝ նորմերի տրամաբանական զարգացումը հենց տրամաբանական մեկնաբանման բարձրագույն աստիճանն է, որովհետև մեկնաբանման արդյունքները ոչ միայն բացատրում են այդ նորմերի բովանդակությունը, այլև բոլոր դեպքերում կատարվում են ամփոփումների և եզրակացությունների ձևով ու անհրաժեշտ դեպքերում օգնում են իրավունքի հատուկ նորմերում ամրագրել նոր բովանդակություն¹⁷: Ըստ որում, ապրիորի ենթադրվում է, որ մեկնաբանվող նորմերը ստույգ են ու չպետք է կասկածներ հարուցեն, որ դրանցում օրենսդրի իրական կամքն է արտահայտված: Իսկ ինչ վերաբերում է իրավունքի նորմի կիրառմանը, ապա դա ևս ենթարկվում է ձևական տրամաբանության օրենքներին և տրամաբանական առումով հանգեցվում է փիլիսոփայական մեթոդների՝ դեդուկցիայի և ինդուկցիայի միացմանն ու կիրառմանը՝ որպես մտահանգման եղանակների և հետազոտման մեթոդների, նաև իրավունքի բնագավառում: Այսպես՝ դեդուկցիայի (լատ. deductio-բխեցում) մեթոդի օգնությամբ բացերի բացահայտման հարցում հաճախ կիրառվում է ընդհանուր իրավաբանական սկզբունքներից մասնավոր դրույթների առկայության մասին հետևությունը: Մի շարք իրավահարաբերություններին վերաբերող նորմերից տրամաբանորեն բխեցվում են այդ իրավահարաբերություններից յուրաքանչյուրին վերաբերող նման նորմեր: Օրինակ՝ վարձակալության պայմանագրի առանձին տեսակների և գույքի առանձին տեսակների վարձակալության պայմանագրերի, այդ թվում՝ շենքի և շինությունների վարձակալության նկատմամբ կիրառվում են վարձակալության մասին ընդհանուր դրույթների կանոնները (ՀՀ Քաղ.օր. 628 հոդվ.):

Մտահանգման մյուս եղանակը և հետազոտման մեթոդը՝ ինդուկցիան (inductio-մակաձում՝ մասնավոր եզրակացությունից դեպի ընդհանուր եզրակացություն տանող եղանակ), կիրառվում է, երբ որոնվող ենթադրությունն արվում է համապատասխան իրավահարաբերությունը կարգավորող

16 Մեկնաբանման եղանակները ուսումնասիրվել են մասնավորապես հետևյալ աշխատություններում. С. А. Голунский, М. С. Строгович. Теория государства и права, М. 1940, И. Е. Фарбер Вопросы толкования советского закона. Уч. зап. Саратовского юридического ин-та. Вып. 4, 1956, էջեր 44-45, П. Е. Недбайло Применение советских правовых норм. Госюриздат, 1960, А.С.Пиголкин Толкование нормативных актов в ССР. Госюриздат, 1960, С. С. Алексеев Общая теория социалистического права. Вып 3, Свердловск, 1965 էջեր 188-191, А.Ф.Черданцев Вопросы толкования советского закона. Свердловск 1972, В.В. Лазарев Пробелы в праве и пути..., 1974, Е.Н. Трубецкой Энциклопедия права//Классики русской философии права. СПб, 1998, Х.И.Гаджиев Толкование права и закона. М., 2000, Спектор Екатерина Ильинична Пробелы в законодательстве и пути их преодоления. Автореферат...канд.юрид.наук, М., 2003, Уранский Фарит Рубенович Пробелы в праве и способы их восполнения в правоприменительной деятельности. М., 2005 և այլն:

17 Տե՛ս В.В. Лазарев Пробелы в праве и пути..., էջ 84:

նորմերի ամբողջ համակցության վերլուծության (լրիվ ինդուկցիա) հիման վրա, այսինքն՝ երբ մասնավոր նորմերի վրա տարածվող սկզբունքներն անհրաժեշտորեն օգտագործվում են ընդհանուր սկզբունքները հաստատելու համար: Բնական է, որ լրիվ ինդուկցիայի դեպքում իրավահարաբերությունների տվյալ խմբին պատկանող մի քանի նորմերից հետևություն է արվում ընդհանուր սկզբունքի մասին, այսինքն՝ հետևությունն արվում է ոչ թե մեկ, այլ մի քանի հղումներից: Ինչ վերաբերում է ռեդուկցիային (լատ. *reductio*–շարժում դեպի հետ, վերադարձ նախկին վիճակին), ապա այն մասնավոր դրույթից դեպի ընդհանուր եզրակացություն տանող (դեդուկցիային հակառակ) մտահանգման և հետագոտման կարգին վերաբերող եղանակ է: Օրինակ՝ ՀՀ քաղ.օր. 275 հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն, երբ այդ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ձանապարհով՝ անկախ նրանց կամքից: Այս հոդվածի բովանդակությունից եզրակացություն է արվում, որ դրանում չնշված մնացած դեպքերում սեփականատերը գրկվում է գույքը բարեխիղճ ձեռք բերողից պահանջելու իրավունքից:

Անհրաժեշտ է նշել նաև, որ իրավունքի բացի առկայության փաստը կարող է հաստատվել միայն լրիվ ինդուկցիայի մեթոդով: Մյուս դեպքերում իրավակիրառը պետք է կարողանա ձեռք բերել նաև լրացուցիչ տվյալներ:

Վերը շարադրվածները ցույց են տալիս, որ իրավունքի բացերի բացահայտման ձևական–իրավաբանական հիմնական մեթոդի քննարկված տրամաբանական և փիլիսոփայական եղանակները բազմազան են, և դրանք գործնականում կիրառելիս պետք է ձիշտ եզրակացություն անել դրանց հետևանքով ստացված արդյունքներից: Վերջիններս չպետք է հակասեն իրավական նորմի (նորմերի խմբի) մեջ ներառված իրադրությանը:

Իրավաբանական գրականության մեջ որպես օրենքում տեղ գտած իրավական բացերի բացահայտման ձևական–իրաբանական մեթոդի հիմնական եղանակներ իրավամբ մատնանշվում և կոնկրետ գործերի քննության ընթացքում օգտագործվում են անալոգիայի (հուն.–*analogia*–համապատասխանություն, նմանություն) կարգով արվող եզրակացությունները՝ օրենքի և իրավունքի համանմանությունները¹⁸: Այսպես՝ ըստ է.Կեմուլարիայի՝ անալոգիան ոչ միայն բացերի լրացման եղանակներից մեկն է, այլ նաև իրավական բացի հատկանիշ: Նրա կարծիքով՝ օրենքով չկարգավորված փաստական հարաբերությունները դրանով կարգավորված հարաբերությունների հետ նմանության փաստի հաստատումն ինքնին ենթադրում է բացի առկայության մասին¹⁹:

18 Տե՛ս Բաչիաշվիլի Կ.Մ., Յոնձե Բ.Վ., Կալանաձե Կ.Ս. և ժր. , *Актуальные проблемы советского права*–Тбилиси, 1988, էջ 239:

19 Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Կեմուլարիա Ե.Ի. *Условия применения углового–процессуального закона по аналогии*//Тезисы докладов на теоритической конференции аспирантов института государства и права АН ССР и юрид.–фак–та МГУ имени М.В.Ломоносова. М.. Изд–во ИГ и ПАН ССР, 1983, էջեր 145–146:

Ե. Սպեկտորը որպես իրավական բացերի բացահայտման և հաղթահարման տրամաբանական առանձին եղանակ մատնանշում է նաև այսպես կոչված «հակադիր եզրակացությունը» (լատ.argumentum a contrario-հակառակ եզրակացություն), ըստ որի՝ որևէ դեպք կամ դեպքերի շարք նախատեսող նորմից բխեցվում է այլ դեպքերի համար բովանդակությամբ հակառակ նորմ:²⁰ Ֆ.Ռեգելսբերգերը, պաշտպանելով նշված տեսակետը, նշում է, որ եթե փաստերի որոշակի կազմի համար նորմ է սահմանվում, և այդպիսի նորմը հանդիսանում է հենց այդ փաստերի առանձնահատկությունը, օրինակ՝ անձանց որոշակի խումբ օժտվում է այս կամ այն առավելություններով կամ զրկվում է այդ առավելություններից, ապա միայն տվյալ անձանց համար սահմանված հակադիր վիճակը դրանով իսկ ճանաչվում է որպես ընդհանուր կանոն:²¹ Մեր կարծիքով՝ նկարագրված դեպքը ոչնչով չի տարբերվում «եղուկցիայի մի տեսակից՝ ոչ լրիվ ինդուկցիայից, որովհետև այստեղ ևս մասնավոր նորմից փաստորեն բխեցվում է ընդհանուր նորմ:

Իրավական բացերի բացահայտման գործում ձևական-իրավաբանական մեթոդն առաջնային է, որովհետև դրանց բացահայտումն առաջին հերթին ենթադրում է գործող իրավունքի բազմակողմանի իմացություն, և դրանից հետո միայն կարելի է եզրակացություն անել իրավունքի բացի լրացման մասին: Սակայն այդ մեթոդը բացահայտման իր բոլոր եղանակներով հանդերձ, չի կարող արդյունքներ տալ այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ընդունել բոլորովին նոր նորմատիվ իրավական ակտեր: Ինչպես Վ.Լազարեն է նշում, այդ մեթոդը «վերացարկվում է գործող իրավունքի նկատմամբ հասարակական հակազդեցությունից, նոր ակտերի հրատարակման տնտեսական նախադրյալներից և հասարակական-քաղաքական հիմնավորումներից»²²: Այլ կերպ ասած՝ նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունման ժամանակ պետք է բացահայտել դրանց ընդունումը հիմնավորող տնտեսական, սոցիալական, հասարակական-քաղաքական, գաղափարական և այլ հիմքերը, որտեղ պետք է օգտագործվեն բոլորովին այլ մեթոդներ ու եղանակներ:

Իրավունքի բացերի բացահայտման մեթոդների և առաջին հերթին ձևական-իրավաբանական մեթոդի կիրառման կապակցությամբ ծագում է այն հարցը, թե իրավակիրառման գործընթացում կոնկրետ որտեղ, երբ և ու՞մ կողմից պետք է արձանագրել (վերջնականորեն որոշել) այդ բացերը իրավական վեճերը դատարանում լուծելին, թե՛ դրանք այլ իրավասու (օպերատիվ հետախուզական, հսկողական, վերահսկողական, ստուգիչ-կարգավորիչ և այլն) մարմիններում: Այդ հարցի պատասխանը տրված է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի տեքստում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք սկզբում երկրի ներսում, իսկ ՀՀ միջազգային

20 Տե՛ս Спектор Екатерина Ильинична, նշվ.ատենախոսություն, էջեր 56-57:

21 Տե՛ս Ф. Регельсбергер Общее учение о праве. Под.ред Ю.С. Гамбарова.М., 1997 էջ 161:

22 Տե՛ս В.В. Лазарев Пробелы в праве и пути..., էջ 298:

պայմանագրերին համապատասխան՝ նաև միջազգային մարմիններում: Այս նորմից ակնհայտորեն բխում է, որ բացերի բացահայտումը վերջնականապես կարող է կատարվել իրավակիրառման գործընթացում և առաջին հերթին՝ դատական ակտերում, որոնցով դատարանը օրենքով նախատեսված մեթոդներով և եղանակներով նաև բացահայտում և լրացնում է բացերը ու գործը լուծում է ըստ էության: Պրակտիկայում դա հիմնականում կատարվում է հատկապես իրավունքի բարդ և մասշտաբային ճյուղերով կարգավորվող, սովորաբար խնդրահարույց պայմանագրային (քաղաքացիական), հեղինակային, վնասի հատուցման և այլ հարաբերությունների վերաբերյալ վեճերում, որոնցով դատարանը հարկադրված է լինում կիրառել նաև իրավական նորմերի տարածական, ընդարձակ մեկնաբանում, այսինքն՝ օրենքի կամ իրավունքի անալոգիա:

Կոնկրետ սոցիոլոգիական մեթոդը ներառում է իրականության առանձին կողմերի ուսումնասիրման նշված համալիր գործոնները, և դրա կիրառման նպատակը ոչ միայն նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունման, այլ նաև գործող իրավական նորմերի լրացման անհրաժեշտությունը պարզելն է: Այս մեթոդը բնութագրվում է հետազոտման իր երեք տարրերի՝ նպատակի, բովանդակության և մեթոդիկայի (եղանակների) միասնությամբ: Ըստ որում, մեթոդի իրացումն իրականացվում է դիտման (դիտարկման) վիճակագրական տվյալների վերլուծության, հասարակական կարծիքը պարզելու, փորձարարության եղանակներով²³

Այսպիսով՝ իրավունքի բացերի բացահայտման մեթոդները և եղանակները կոչված են երաշխավորել իրավական համակարգի մաս կազմող բոլոր նորմերի անխափան և ճշգրիտ կիրառումը, վերացնել ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը խոչընդոտող բացերը, ապահովել օրինականությունը:

23 Այդ տարրերի հասկացության, բովանդակության և վերլուծության հարցերն ուղղակիորեն չեն առնչվում սույն աշխատանքի հետ: Դրանց մասին մանրամասն Տեն В.В. Лазарев Пробелы в праве и пути... էջեր 100-129 և այլ աշխատություններ:

МЕТОДЫ УСТАНОВЛЕНИЯ ПРОБЕЛОВ В ПРАВЕ**Рафик Петросян***Доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА***Гарегин Петросян***Заместитель начальника юридического отдела Аппарата Народного
Собрания РА Советник 1-го класса Государственной службы,
кандидат юридических наук*

В статье, исходя из позитивного права, анализированы формально-юридический и конкретно-социологический методы исследования пробелов в праве. Исследование производилось с учетом концепций «узкого» и «широкого» подходов к сущности и классификации пробелов в праве и того обстоятельства, что указанные методы являются органическими элементами категориального аппарата общей юриспруденции, установление которых преследует цель устранения пробелов, препятствующих защите прав, восполнению и/или преодолению пробелов, обеспечению законности.

Ключевые слова: пробелы в праве, установление пробелов, методология, формально-юридический, конкретно-социологический, способы установления пробелов, аналогия, эксперимент.

THE METHODS OF DISCLOSING THE GAPS OF LAW**Rafik Petrosyan***Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA***Garegin Petrosyan***Deputy Head of the Legal Department of the RA National Assembly Staff,
First Class Advisor of the RA State Service,
PhD in Law*

The article analyzes the gaps of formal-legal and specific sociological research methods of the law and legislation gaps from the perspective of positive law concept. The study is done by taking into consideration the scientific aspects of legal gaps' essence along with the classification of "narrow" and "wide" classification. The fact that the above mentioned methods are considered to be the organic elements of the categorical apparatus of general methodology of legal study are also being touched upon. The disclosure of the latter is aimed at filling and/or managing the gaps impeding the defense of rights, herein ensuring legality.

Key words: gaps of law, disclosure of gaps, methodology, formal-legal, specific sociological, the ways of disclosing the gaps, analogy, experimentalism